



*ՀԱՍՏԱՏՎԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ
ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵԻ
2009 թ. ՓԵՏՐՎԱՐԻ 27-Ի ՆԻՍՏԻ ՈՐՈՇՄԱՄԲ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՄՔՆԵՐԻ ՄԻՋԵՎ 2009 թ.
ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ՖՈՒՏԲՈԼԻ ՄՐՅՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԲՈՎԱՆՊԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Գլուխ I. ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ 5
 Հոդված 1. Կանոնակարգի նպատակը
 Հոդված 2. Կանոնակարգի խնդիրները

Գլուխ II. ՄՐԾՈՒՄՆԵՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ 5
 Հոդված 3. Մրցումների նպատակը
 Հոդված 4. Մրցումների խնդիրները

Գլուխ III. ՄՐԾՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ 6
 Հոդված 5. Մրցումների ղեկավարումը
 Հոդված 6. Մրցումները եւ մասնակից թիմերը
 Հոդված 7. Մրցումների վայրը
 Հոդված 8. Մրցումների անցկացման համակարգը
 Հոդված 9. Մրցաշարային աղյուսակում թիմերի դասակարգումը
 Հոդված 10. Խաղերի կազմակերպումը, ֆուտբոլիստների մասնակցությունը եւ փոխա-
 րինումը
 Հոդված 11. Խաղի մասնակիցների մարզահագուստը
 Հոդված 12. Մրցումների խաղացանկը եւ անցկացման ժամկետները
 Հոդված 13. Ակումբների պատասխանատվությունը
 Հոդված 14. «Ռաշտի տեր» ակումբի պարտականությունները
 Հոդված 15. Հասարակական կարգի եւ անվտանգության ապահովումը
 Հոդված 16. Մրցումների մասնակիցների հայտավորումը եւ վերահայտավորումը
 Հոդված 17. Պարգեւատրումը
 Հոդված 18. Չկայացած եւ անավարտ խաղերը
 Հոդված 19. Թիմերի չներկայանալը խաղին կամ Առաջնություններին մասնակցելուց
 հրաժարվելը
 Հոդված 20. Բողոքարկումներն ու բողոքները
 Հոդված 21. Խաղերի տեսագրումը
 Հոդված 22. Խաղերի հեռուստառադիոհեռարձակումը
 Հոդված 23. Մասնակցության մուտքավճարը

Գլուխ IV. ԽԱՂԵՐԻ ՄՊԱՍԱՐԿՈՒՄԸ 18
 Հոդված 24. Սպասարկման իրականացումը
 Հոդված 25. Սպասարկող անձնակազմի նշանակումը
 Հոդված 26. Սպասարկող անձնակազմի անդամների գործառույթները
 Հոդված 27. Մրցավարների եւ տեսուչների վարձատրումը

Գլուխ V. ԻՐԱՎԱՅԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 20
 Հոդված 28. Պայմանագրերի գրանցումը
 Հոդված 29. Վեճերի քննարկումը
 Հոդված 30. Ակումբի (թիմի) անվանափոխությունը
 Հոդված 31. Իրավահաջորդությունը

Գլուխ VI. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ 21
 Հոդված 32. Թիմերի մասնակցությունը Եվրագավաթներին
 Հոդված 33. «Արդար խաղի» գնահատումը
 Հոդված 34. Այլ հարցեր

Հավելված 1. Գավաթի խաղարկության կանոնակարգը 23
Հավելված 2. Խաղացանկ՝ Գավաթի խաղարկության, Բարձրագույն խմբի առաջնության եւ միջազգային հանդիպումների 24

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՎՈՒՄԲԵՆԵՐԻ ՄԻՋԵՎ 2009 թ. ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ՖՈՒՏԲՈԼԻ
ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ
ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

Գլուխ I. ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հոդված 1. Կանոնակարգի նպատակը

Սահմանել «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» (այսուհետ՝ ՀՖՖ) իրավաբանական անձանց միության հովանու ներքո անցկացվող պրոֆեսիոնալ (ոչ սիրողական) ֆուտբոլի մրցումների (այսուհետ՝ մրցումներ) կազմակերպման եւ անցկացման սկզբունքները, պրոֆեսիոնալ ֆուտբոլում իրավաբանական եւ ֆիզիկական անձանց (այսուհետ՝ ֆուտբոլային սուբյեկտներ) իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը, իրավահարաբերությունները:

Հոդված 2. Կանոնակարգի խնդիրները

1. Համապատասխանեցնել մրցումների համակարգը ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի եւ ՀՖՖ-ի հիմնարար փաստաթղթերի պահանջներին:
2. Սահմանել մրցումների կազմակերպման, անցկացման, ղեկավարման եւ հսկողության կարգերը:
3. Ստեղծել լիարժեք պայմաններ մրցումների մասնակիցների համար:

Գլուխ II. ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հոդված 3. Մրցումների նպատակը

1. Նպաստել ֆուտբոլի հետագա զարգացմանը Հայաստանում:
2. Նպաստել պրոֆեսիոնալ ֆուտբոլիստների վարպետության մակարդակի բարձրացմանը:
3. Նպաստել միջազգային մրցաշարերում Ազգային հավաքականների եւ ակումբային թիմերի հաջող ելույթներին:
4. Նպաստել «Արդար խաղի» սկզբունքների արմատավորմանը:

Հոդված 4. Մրցումների խնդիրները

1. Դասակարգել Բարձրագույն եւ Առաջին խմբերի թիմերին՝ ըստ Առաջնությունների արդյունքների:
2. Ի հայտ բերել Գավաթակրին եւ Նախորդ մրցաշրջանի Սուպերգավաթակրին:
3. Ի հայտ բերել մրցաշրջանի լավագույն ֆուտբոլիստին, բարձրագույն խմբի առաջնության ռմբարկուին եւ այլ մրցանակակիրներին ու դափնեկիրներին:

Գլուխ III. ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Հոդված 5. Մրցումների ղեկավարումը

1. Մրցումների ընդհանուր ղեկավարումն իրականացնում է ՀՖՖ-ն, որը, մասնավորապես՝
 - ա. հաստատում է մրցումների կանոնակարգն ու խաղացանկը,
 - բ. սահմանում է մրցումների մասնակցության մուտքավճարները,
 - գ. իրականացնում է թիմերի հայտավորման ընթացակարգը,
 - դ. կազմակերպում է խաղերն եւ իրականացնում դրանց հսկողությունը,
 - ե. հաստատում է մրցումները սպասարկող մրցավարների եւ տեսուչների կազմը,
 - զ. ամփոփում է հանդիպումների արդյունքները,
 - է. հաստատում է առաջնությունների արդյունքները եւ իրականացնում է մրցանակակիրների պարգևատրումը,

- ը. գրանցում է մրցումների մասնակից ֆուտբոլային սուբյեկտների միջև իրավահարաբերությունները կարգավորող փաստաթղթերը (աշխատանքային, տրանսֆերային պայմանագրեր եւ այլն),
- թ. կազմակերպում է ուսումնամարզական եւ ուսումնամեթոդական հավաքներ, սեմինարներ,
- ժ. իրականացնում է այլ գործառույթներ:

Հոդված 6. Մրցումները եւ մասնակից թիմերը

1. Պրոֆեսիոնալ ֆուտբոլի ընթացիկ մրցաշրջանի մրցումներն ընդգրկում են՝
 - Գավաթի խաղարկությունը
 - Բարձրագույն խմբի առաջնությունը
 - Առաջին խմբի առաջնությունը
 - Նախորդ մրցաշրջանի Սուպերգավաթի խաղարկությունը
2. Մրցումներին կարող են մասնակցել այն թիմերը, որոնց ակումբներն ունեն իրավաբանական անձի կարգավիճակ, ընդունում են ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի, ՀՖՖ-ի հիմնարար սկզբունքները եւ պարտավորվում են կատարել վերոնշյալ մարմինների, ինչպես նաեւ սույն Կանոնակարգի պահանջները:
3. Բարձրագույն խմբի առաջնությանն իրավունք ունեն մասնակցել միայն ՀՖՖ ակումբների արտոնագրման համակարգի պահանջների համաձայն արտոնագրված ակումբների թիմերը:
4. Մրցաշրջանի ավարտին Առաջնությունների արդյունքներով՝
 - Բարձրագույն խմբում վերջին տեղը գրաված թիմը հաջորդ մրցաշրջանում հանդես կգա Առաջին խմբում,
 - Առաջին խմբի ավելի բարձր տեղ գրաված թիմը, որի ակումբը ներկայացված չէ հաջորդ մրցաշրջանում Բարձրագույն խմբում, իրավունք է ստանում մասնակցել Բարձրագույն խմբի Առաջնությանը:
5. Արգելվում է նույն ֆինանսական աղբյուրից սնվող մեկից ավելի ակումբների մասնակցությունը Բարձրագույն խմբի Առաջնությանը:
6. Մրցումների մասնակից ակումբները հաստատում են իրենց մասնակցությունն Առաջնություններին եւ Գավաթի խաղարկությանը՝ մինչեւ փետրվարի 16-ը՝ ՀՖՖ ներկայացնելով սահմանված կարգի «Հավաստագիր»:
7. Սուպերգավաթի խաղարկությունն անցկացվում է նախորդ մրցաշրջանի Չեմպիոն («Դաշտի տեր») եւ Գավաթակիր թիմերի միջև:

Հոդված 7. Մրցումների վայրը

1. Մրցումների մասնակից ակումբները մրցակցին ընդունում են «Հավաստագրում» նշված, ՀՖՖ-ի կողմից ընդունված, սեփականության կամ վարձակալական հիմունքներով իրենց պատկանող մարզադաշտերում:
2. Հանդիպումն այլ մարզադաշտ տեղափոխելու համար հյուրընկալող ակումբը պարտավոր է գրավոր դիմել ՀՖՖ հանդիպումից ոչ ուշ, քան 3 օր առաջ:
3. Յուրաքանչյուր խաղին տվյալ մարզադաշտի պատրաստ լինելը նախախաղային խորհրդակցության ժամանակ որոշում է խաղի տեսուչը՝ հիմք ընդունելով նաեւ խաղադաշտի վերաբերյալ մրցավարի եզրակացությունը:
4. Մրցումների խաղերին դարպասացանցերը պարտադիր են:
5. Մարզադաշտերում պետք է բարձրացված լինեն ՀՖՖ-ի, «Արդար խաղի» եւ Առաջնության դրոշմերը:

Հոդված 8. Մրցումների անցկացման համակարգը

1. Բարձրագույն խմբի Առաջնությունն անցկացվում է շրջանաձեւ մրցակարգով՝ չորս շրջանով: Թիմերը հանդիպում են սեփական եւ մրցակցի մարզադաշտերում: Առաջին խմբում՝ երեք շրջանով. առաջին երկու շրջանում թիմերը հանդիպում են սեփական և մրցակցի մարզադաշտերում, երրորդ շրջանում խաղացանկը որոշվում է վիճակահանությամբ:
2. Գավաթի խաղարկությունն անցկացվում է «Գավաթի խաղարկության Կանոնակարգ»-ի (Հավելված 1) համաձայն:
3. Սուպերգավաթի խաղարկությունն անցկացվում է Գավաթի խաղարկության եզրափակիչ խաղի կանոններով:
4. Գավաթի եւ Սուպերգավաթի խաղերը կազմակերպման առումով հավասարազոր են Բարձրագույն խմբի առաջնության խաղերին:

5. Խաղերը կազմակերպելու եւ վարելու համար ՀՖՖ-ն նշանակում է սպասարկող անձնակազմ՝ տեսուչ, մրցավար, մրցավարի երկու օգնական եւ 4-րդ պաշտոնյա կազմով:

6. Խաղը սկսելուց առաջ եւ ավարտից հետո, համաձայն ՖԻՖԱ-ի եւ ՈՒԵՖԱ-ի ընդունած կարգի, խաղադաշտում թիմերի ֆուտբոլիստները, մրցավարները համապատասխանաբար ողջունում եւ հրաժեշտ են տալիս միմյանց եւ հանդիսականներին:

Հոդված 9. Մրցաշարային աղյուսակում թիմերի դասակարգումը

1. Թիմերն Առաջնության աղյուսակում դասակարգվում են ըստ վաստակած միավորների: Հաղթանակի համար տրվում է 3 միավոր, ոչ-ոքիի համար՝ 1 միավոր, պարտության դեպքում միավոր չի տրվում:

2. Երկու եւ ավելի թիմերի միավորների հավասարության դեպքում Հայաստանի Չեմպիոնը եւ Առաջին խմբի հաղթողը որոշվում են լրացուցիչ խաղով (խաղերով), որի (որոնց) անցկացման ժամկետները եւ կարգը որոշում է ՀՖՖ-ն: Մնացած դեպքերում թիմերի դասակարգման ժամանակ առավելությունը տրվում է այն թիմին, որը.

2.1 բոլոր հանդիպումներում տարել է ավելի շատ հաղթանակ,

2.2 հավակնորդ թիմերի միջեւ խաղերում՝.

ա. վաստակել է ավելի շատ միավոր,

բ. ունի խփած եւ բաց թողած գնդակների լավագույն տարբերություն,

գ. խփել է ավելի շատ գոլ,

2.3 բոլոր հանդիպումներում ունի խփած և բաց թողած գնդակների լավագույն տարբերություն,

2.4 վիճակահանությամբ:

Հոդված 10. Խաղերի կազմակերպումը, ֆուտբոլիստների մասնակցությունը եւ փոխարինումը

1. Յուրաքանչյուր խաղից 1.5 ժամ առաջ հանդիպման տեսուչի ղեկավարությամբ անցկացվում է նախախաղային խորհրդակցություն, որին մասնակցում են՝

ա/ մրցող Ակումբների ներկայացուցիչները,

բ/ խաղը սպասարկող մրցավարական անձնակազմը,

գ/ մարզադաշտի տնօրինության ներկայացուցիչը,

դ/ ոստիկանության ներկայացուցիչը,

ե/ «դաշտի տեր» Ակումբի անվտանգության պատասխանատուն,

զ/ գնդակ վերադարձնող պատանի ֆուտբոլիստների մարզիչը:

զ/ - գ/ կետերի պահանջների կատարման համար պատասխանատու է «դաշտի տեր» Ակումբը:

2. Ակումբների կողմից նախախաղային խորհրդակցությանը մասնակցող անձինք մրցավարի ստուգման են ներկայացնում ֆուտբոլիստների խաղային մարզահագուստն ամբողջությամբ՝ մարզաշապիկ, կիսավարտիք, կիսագուլպա, դարպասապահի եւ պահեստային դարպասապահի մարզաշապիկ, կիսավարտիք կամ սպորտային տաբատ, զանկապան:

3. Թիմերը, որպես կանոն, մարզադաշտ են ներկայանում խաղից առնվազն մեկ ժամ առաջ:

4. Ֆուտբոլիստները մրցումներին մասնակցում են ֆուտբոլիստի անձնագրով, կամ բացառության կարգով, քաղաքական անձնագրով, իսկ պաշտոնյաները՝ մասնակցի քարտով:

5. Թիմերի ներկայացուցիչները խաղը սկսելուց ոչ ուշ, քան 45 րոպե առաջ հանձնում են 4-րդ պաշտոնյային խաղի լրացված ու ստորագրված արձանագրությունը, ֆուտբոլիստների անձնագրերը և պաշտոնյաների մասնակցի քարտերը: Անձնագրերը եւ քարտերը վերադարձվում են խաղից հետո:

6. Խաղին կարող են միայն արձանագրությունում նշված ֆուտբոլիստները: Ֆուտբոլիստները կարող են ենթարկվել հակադոպինգային ստուգման:

7. Խաղի ընթացքում տեխնիկական գոտում գտնվելու իրավունք ունեն միայն արձանագրությունում նշված անձինք:

8. Խաղի արձանագրությունում լրացվում են խաղաշրջանում հայտավորված ֆուտբոլիստներից 18-ի (11-ը՝ հիմնական, 7-ը՝ պահեստային) եւ պաշտոնյաներից 6-ի տվյալները:

9. Մրցումներին մասնակցելու իրավունք ունեն 17 տարին լրացած ֆուտբոլիստները: 15-ից 17 տարեկան ֆուտբոլիստները կարող են մասնակցել միայն Մարզաբժշկական դիսպանսերի (կենտրոնի) հատուկ թույլտվության տեղեկանքով, որը պետք է գրանցված լինի ՀՖՖ-ի ՄԿԱ բաժնում:

10. Օտարերկրյա ֆուտբոլիստների մասնակցությունը թիմերի կազմում չի սահմանափակվում:

11. Թիմերի մարզիչները որպես ֆուտբոլիստ հանդես գալու իրավունք չունեն:

12. Բարձրագույն խմբի թիմի կազմում յուրաքանչյուր խաղին կարող են մասնակցել միեւնույն ակումբի Առաջին խմբի եւ/կամ պատանեկան թիմերի ֆուտբոլիստներ՝ առանց քանակի սահմանափակման:

13. Առաջին խմբի թիմի կազմում յուրաքանչյուր խաղին (բացառությամբ խաղաշրջանի վերջին 4 խաղի), կարող է մասնակցել միեւնույն ակումբի Բարձրագույն խմբի թիմի առավելագույնը 5 ֆուտբոլիստ:

14. Առաջին խմբի թիմի կազմում Առաջնության խաղերին կարող են մասնակցել միեւնույն ակումբի պատանեկան թիմերի ֆուտբոլիստներ՝ առանց քանակի սահմանափակման:

15. Խաղի ընթացքում թույլատրվում է կատարել ֆուտբոլիստների փոխարինումներ՝

- Բարձրագույն խմբի խաղերում՝ 4 փոխարինում, որոնցից առնվազն մեկը պետք է լինի մինչեւ 18 տարեկան,

- Առաջին խմբի խաղերում՝ 7 փոխարինում:

16. Ֆուտբոլիստների՝ վնասվածք ստանալու դեպքում մրցող թիմերի բուժանձնակազմերին խաղադաշտ մտնել թույլատրվում է միայն մրցավարի որոշմամբ:

17. Փոխարինման պատրաստվող ֆուտբոլիստների նախավարժանքի վայրը սահմանվում է խաղից առաջ կազմակերպվող նախախաղային խորհրդակցության ժամանակ՝ մրցավարի կողմից:

18. Յուրաքանչյուր թիմից միաժամանակ նախավարժանք կարող է կատարել ոչ ավելի, քան 4 ֆուտբոլիստ՝ տարբերիչ մարզահագուստով:

Հոդված 11. Խաղի մասնակիցների մարզահագուստը

1. Ֆուտբոլիստների մարզահագուստը պետք է համապատասխանի «Ֆուտբոլ խաղի կանոնների» պահանջներին: Դարպասապահների մարզաշապիկի գույնը պետք է տարբերվի թիմերի ֆուտբոլիստների եւ մրցավարների մարզաշապիկների գույներից:

2. Թիմերի բժիշկները, մեքուդները պետք է լինեն մարզահագուստով: Այլ հագուստով խաղադաշտ մտնել չի թույլատրվում:

3. Մրցող թիմերի մարզահագուստի գույները հաստատվում են մրցավարի կողմից՝ նախախաղային խորհրդակցության ժամանակ: Գույների համընկնման դեպքում մարզահագուստը փոխում է «հյուր» թիմը:

4. Մարզահագուստի վրա թույլատրվում է տեղադրել գովազդ, որը չի պարունակում քաղաքական, ռասայական, կրոնական տարրեր:

5. Խաղացողներին արգելվում է խաղի ժամանակ կրել ցանկացած տիպի զարդեղեն:

Հոդված 12. Մրցումների խաղազանկր եւ անցկացման ժամկետները

1. Ամփոփ խաղացանկը հաստատվում է ՀՖՖ-ի Գործադիր կոմիտեի կողմից ոչ ուշ, քան մրցումներն սկսելուց 30 օր առաջ:

2. Ակումբի երկու պաշտոնական խաղերի (ներառյալ Գավաթի խաղարկության, Առաջնության, ՈՒԵՖԱ-ի ակումբային մրցաշարերի եւ ՀՀ հավաքականների հանդիպումները) միջեւ ընկած ժամանակահատվածը պետք է լինի ոչ պակաս, քան 72 ժամ:

3. Այն թիմերը, որոնք խաղը անցկացնելու ժամանակահատվածում երկու եւ ավելի խաղացողներ են զործուղել ՀՀ հավաքականներ, հանդիպումը հետաձգելու համար կարող են խաղացանկով նախատեսված օրից ոչ ուշ, քան 3 օր առաջ գրավոր դիմել ՀՖՖ:

4. Հաստատված խաղացանկի խաղերի առանձին դեպքերում տեղափոխության իրավունքը վերապահված է ՀՖՖ Նախագահին:

5. Մրցումների անցկացման ժամկետներն են.

- Գավաթի խաղարկություն	17.03 - 09.05
- Բարձրագույն խմբի առաջնություն՝ առաջին եւ երկրորդ շրջաններ	21.03 - 28.06
երրորդ եւ չորրորդ շրջաններ	25.07 - 07.11
- Առաջին խմբի առաջնություն՝ 1-ին փուլ (առաջին շրջան եւ երկրորդ շրջանի կեսը)	09.04 - 04.07
2-րդ փուլ (երկրորդ շրջանի կեսը եւ երրորդ շրջան)	31.07 - 06.11
- Սուպերգավաթ	24.09

Հոդված 13. Ակունքների պատասխանատվությունը

1. Ակունքները պարտավոր են՝

ա/ տարեկան առնվազն մեկ անգամ ապահովել իրենց ֆուտբոլիստների բժշկական հետազոտությունը,

բ/ բարձրագույն խմբի յուրաքանչյուր հանդիպումից անմիջապես հետո ապահովել իրենց թիմերի գլխավոր մարզիչների մասնակցությունը կազմակերպված մամուլի ասուլիսին կամ բրիֆինգին,

գ/ վարել ֆուտբոլիստների ստացած դեղին քարտերի հաշվառումը և կիրառել Կարգապահական Կանոնակարգի 16-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի պատժամիջոցները առանց Կարգապահական կոմիտեի որոշման,

դ/ պահպանել որակազրկված ֆուտբոլիստների և պաշտոնյաների որակազրկման ժամկետները:

2. Ակունքները պատասխանատու են՝

ա/ արձանագրությունում նշված ֆուտբոլիստների և պաշտոնյաների՝ խաղին մասնակցելու իրավասության համար: Արձանագրությունում նշված լիմեյը համարվում է մասնակցություն խաղին,

բ/ խաղի ժամանակահատվածում իրենց ֆուտբոլիստների, վարչական անձնակազմի, ինչպես նաև հանդիսականների (իրենց թիմի երկրպագուների) անօրեն, անթույլատրելի և անվայել գործողությունների համար,

գ/ մարզադաշտում հանդերձարանների, շինությունների և գույքի պատշաճ վիճակի պահպանման համար,

դ/ ՀՖՖ ոչ հավաստի տեղեկություն պաշտոնապես ներկայացնելու համար:

3. Ակունքներին արգելվում է՝

ա/ միջամտել խաղը սպասարկող խմբի գործողություններին,

բ/ բացառությամբ առանձին գրավոր համաձայնությունների որեւէ կերպ օգտագործել ՀՖՖ-ի դրոշը, էմբլեմը (լոգոն):

Հոդված 14. «Դաշտի տեր» ակունքի պարտականությունները

«Դաշտի տեր» ակունքը պարտավոր է ապահովել՝

1. սենյակ նախախաղային խորհրդակցության համար,

2. դրոշակներ՝ մրցավարի օգնականների համար, փոխարինման ցուցատախտակ,

3. համապատասխան վայր (սենյակ կամ «խառը գոտի») մամուլի ասուլիսի կամ բրիֆինգի համար,

4. բժշկական ծառայության ներկայությունը (բացակայության դեպքում հանդիպումը չի անցկացվում),

5. «հյուր» թիմի պաշտոնյաների համար առանձնացված 15 տեղ,

6. նախապես գրավոր դիմելու դեպքում, առանձնացված տեղեր տրիբունաներից մեկում՝ մարզադաշտի նստատեղերի 5%-ի չափով, «հյուր» թիմի մարզասերների համար,

7. համապատասխան տեղեր հեռուստաօպերատորների համար,

8. հեռախոսակապ եւ ֆաքս,

9. ռադիոհանգույց,

10. հանդիպման ժամանակ գնդակ վերադարձնող 10-12 պատանի ֆուտբոլիստների ներկայությունը (պատանի ֆուտբոլիստները պետք է ունենան միատեսակ մարզահագուստ, որը գույնով պետք է տարբերվի խաղացող թիմերի ու մրցավարների մարզահագուստներից),

11. «հյուր» թիմի եւ սպասարկող անձնակազմի համար համապատասխան քանակի թեյ, հանքային ջուր (միայն պլաստիկ տարաներով),

12. հանդիպումն անցկացնելու համար առնվազն 4 գնդակ,

13. կողմնակի անձանց մուտքի արգելքը մրցավարական սենյակ,

14. տեսուչի պահանջով խաղի տեսագրության տրամադրումը հանդիպումից անմիջապես հետո,

15. մարզադաշտում և նրա հարակից տարածքներում հասարակական կարգի պահպանությունը իրականացնող իրավապահ մարմինների համապատասխան թվակազմի ներկայությունը հանդիպմանը,

16. «հյուր» թիմի եւ սպասարկող անձնակազմի դիմավորումը եւ ճանապարհումը, նրանց անվտանգությունը,

17. «հյուր» թիմի պահանջի դեպքում հանդիպման նախօրը օրը մարզադաշտի տրամադրումը առնվազն 45 րոպեով մարզվելու համար:

Հոդված 15. Հասարակական կարգի եւ անվտանգության ապահովումը

1. Մարզադաշտում եւ դրան հարակից տարածքներում խաղից առաջ, խաղի ժամանակ, ընդմիջմանը եւ խաղից հետո հասարակական կարգի պահպանության ու անվտանգության վերահսկումը իրականացնում է «դաշտի տեր» ակումբի անվտանգության հարցերով պատասխանատուն՝ օժանդակելով իրավապահ մարմինների աշխատակիցներին:

2. Իրավապահ մարմինների աշխատակիցների (համազգեստով) համապատասխան թվակազմի բացակայության դեպքում խաղը չի անցկացվում:

Հոդված 16. Մրցումների մասնակիցների հայտավորումը եւ վերահայտավորումը

1. Պրոֆեսիոնալ ֆուտբոլում թույլատրվում է հայտավորել մինչեւ 10 պաշտոնյայի եւ մինչեւ 30 ֆուտբոլիստի, որոնցից առնվազն 6-ը պետք է լինեն «հանրապետությունում մարզված», իսկ 6-ից 3-ը՝ «ակումբում մարզված»:

«Հանրապետությունում մարզված» է համարվում այն ֆուտբոլիստը, որը 15-ից մինչեւ 21 տարեկան ժամանակահատվածում, 3 խաղաշրջան/տարի գրանցված է եղել հանրապետության որեւէ ակումբում կամ ակումբներում:

«Ակումբում մարզված» է համարվում այն ֆուտբոլիստը, որը 15-ից մինչեւ 21 տարեկան ժամանակահատվածում գրանցված է եղել տվյալ ակումբում եւ այնտեղ խաղացել առնվազն 3 խաղաշրջան/տարի:

Եթե ակումբը թիմում չի ներառում «հանրապետությունում մարզված» կամ «ակումբում մարզված» ֆուտբոլիստների պահանջվող քանակը, ապա հայտավորման ցուցակը համապատասխանաբար կրճատվում է:

2. Գավաթի խաղարկության մասնակից թիմերի համար հայտավորման ժամկետ է սահմանվում փետրվարի 25-ից մինչեւ մարտի 10-ն ընկած ժամանակահատվածը՝ ըստ գրաֆիկի: Մնացած թիմերի համար հայտավորման ժամկետը սկսվում է տվյալ Առաջնությունից 15 օր առաջ եւ ավարտվում 5 օր առաջ:

3. Հայտավորվել կամ վերահայտավորվել կարող են այն պրոֆեսիոնալ ֆուտբոլիստները, որոնք գրանցված են թիմը ներկայացնող ակումբում:

4. Հայտավորման ժամկետներից հետո փոփոխությունները թիմերում կատարվում են միայն սահմանված ժամկետներում՝ վերահայտավորման միջոցով:

5. Ֆուտբոլիստների վերահայտավորման ժամկետ է սահմանվում Բարձրագույն խմբում՝ երկրորդ եւ երրորդ շրջանների, Առաջին խմբում՝ առաջին եւ երկրորդ փուլերի միջեւ ընկած ժամանակահատվածը: Պաշտոնյաների վերահայտավորման համար ժամկետ չի սահմանվում:

6. Հայտավորվում /վերահայտավորվում/ են ակումբների այն պաշտոնյաները, որոնք հավաստագրված են ՀՖՖ-ի Արտոնագրման բաժնի կողմից: Դրանք են՝

- մարզիչ(ներ),
- բժիշկ(ներ),
- մեքսոլ(ներ) (ֆիզիոթերապետ),
- ադմինիստրատոր,
- թարգմանիչ (օտարերկրացի մարզչի առկայության պարագայում):

7. Ֆուտբոլիստների վերահայտավորումը սահմանված ժամկետներից դուրս թույլատրվում է միայն.

- արտասահմանից ժամանած ֆուտբոլիստներին,
- զինվորական ծառայության մեջ գտնվող կամ ծառայությունն ավարտած ֆուտբոլիստներին (ավարտից ոչ ուշ, քան 30 օրվա ընթացքում),
- մինչեւ 18 տարեկան ֆուտբոլիստներին, որոնք չեն մասնակցել ընթացիկ մրցաշրջանի պրոֆեսիոնալ մրցումներին:

8. Զինվորական ծառայության մեջ գտնվող ֆուտբոլիստը, որը կնքված պայմանագիր ունի որեւէ ակումբի հետ, այդ ակումբի համաձայնության դեպքում կարող է հայտավորվել (վերահայտավորվել) յուրաքանչյուր թիմում՝ մինչեւ ծառայության ավարտը: Այս հարցերով ակումբների միջեւ ծագած խնդիրների վերջնական լուծումը վերապահվում է ՀՖՖ-ին:

9. Արտասահմանից ժամանած ֆուտբոլիստների հայտավորումը (վերահայտավորումը) կատարվում է ՖԻՖԱ-ի «Ֆուտբոլիստների կարգավիճակի եւ տեղափոխման մասին» կանոնակարգի համաձայն:

10. Յուրաքանչյուր վերահայտավորվող ֆուտբոլիստի համար վճարվում է 25 000 դրամ, բացառությամբ

- եթե վերահայտավորվում է զինվորական ծառայության մեջ գտնվող ֆուտբոլիստը,
- եթե վերահայտավորվող ֆուտբոլիստը մինչև խաղաշրջանի սկիզբը ունեցել է պայմանագիր տվյալ ակումբի հետ:

11. Խաղաշրջանի ընթացքում ֆուտբոլիստներին մի թիմից մյուսը տեղափոխվել թույլատրվում է մեկ անգամ: Վարձակալության ժամկետը լրանալուց հետո ֆուտբոլիստի վերադարձը «Մայր» ակումբ տեղափոխություն չի համարվում: Տեղափոխության համար անհրաժեշտ է, որպեսզի ֆուտբոլիստը հանվի նախորդ թիմի հայտից, ապա վերահայտավորվի նոր թիմի կազմում: Վարձակալության պայմանագրի ժամկետը լրանալուց հետո ֆուտբոլիստի վերադարձը «Մայր» ակումբ հիմք չի հանդիսանում՝ խախտելու վերահայտավորման ժամկետները:

12. Ակումբը հայտավորման (վերահայտավորման) համար ներկայացնում է՝

- սահմանված ձեւի, տպագիր լրացված, ակումբի ղեկավարի կողմից ստորագրված եւ կնքված հայտավորման (վերահայտավորման) թերթիկ,

- մուտքավճարի կամ վերահայտավորման վճարի փոխանցման (կանխիկ վճարման) անդորրագրի պատճենը:

13. Ակումբները (թիմերը) հայտավորման փաստաթղթերը ՀՖՖ են ներկայացնում գրաֆիկով սահմանված օրերին:

14. Ֆուտբոլիստին կամ պաշտոնյային հայտից հանելը կատարվում է առաջնության ընթացքում, ակումբի ղեկավարի պաշտոնական գրության հիման վրա, որին կցվում է հայտից հանվող պաշտոնյայի անձնական քարտը:

Հոդված 17. Պարգևատրումը

1. Հաղթող եւ մրցանակակիր ակումբները ոչ ուշ, քան պարգևատրումից 15 օր առաջ ՀՖՖ-ին են ներկայացնում պարգևատրմանը ենթակա 30-ից ոչ ավելի անձանց ցուցակ:

2. Հայաստանի Բարձրագույն խմբի Առաջնությունում՝

2.1 առաջին տեղը գրաված թիմին շնորհվում է «Ֆուտբոլի 2009թ. Հայաստանի Չեմպիոն» կոչումը: Ակումբը պարգևատրվում է 5 000 000 դրամով և ՀՖՖ-ի դիպլոմով: Թիմին է հանձնվում ՀՖՖ-ի փոխանցիկ Գավաթը: Ակումբի ղեկավարները, թիմի ֆուտբոլիստները եւ պաշտոնյաները պարգևատրվում են ոսկե մեդալներով եւ առաջին կարգի դիպլոմներով,

2.2 երկրորդ եւ երրորդ տեղերը գրաված թիմերը, թիմերի ֆուտբոլիստները, Ակումբների ղեկավարները եւ պաշտոնյաները պարգևատրվում են համապատասխանաբար՝ արծաթե եւ բրոնզե մեդալներով եւ ՀՖՖ-ի երկրորդ եւ երրորդ կարգի դիպլոմներով:

3. Հայաստանի Առաջին խմբի Առաջնությունում՝

3.1 առաջին տեղը գրաված թիմը պարգևատրվում է ՀՖՖ-ի դիպլոմով: Թիմին է հանձնվում ՀՖՖ-ի փոխանցիկ Գավաթը: Ակումբի ղեկավարները, թիմի ֆուտբոլիստները եւ պաշտոնյաները պարգևատրվում են փոքր ոսկե մեդալներով եւ առաջին կարգի դիպլոմներով,

3.2 երկրորդ եւ երրորդ տեղերը գրաված թիմերը, թիմերի ֆուտբոլիստները եւ պաշտոնյաները, Ակումբի ղեկավարները պարգևատրվում են ՀՖՖ-ի համապատասխան կարգի դիպլոմներով:

4. Հայաստանի Գավաթի խաղարկության հաղթող թիմին է հանձնվում փոխանցիկ Գավաթը: Ակումբը պարգևատրվում է 3 000 000 դրամով և ՀՖՖ-ի առաջին կարգի դիպլոմով: Ակումբի ղեկավարները, թիմի ֆուտբոլիստները եւ պաշտոնյաները պարգևատրվում են ՀՖՖ-ի առաջին կարգի դիպլոմներով:

5. Գավաթի եզրափակչում պարտված թիմը, Ակումբի ղեկավարները, թիմի ֆուտբոլիստները եւ պաշտոնյաները պարգևատրվում են Գավաթի խաղարկության եզրափակչի մասնակցի ՀՖՖ-ի դիպլոմներով:

6. Սուպերգավաթի խաղարկության հաղթող թիմին է հանձնվում Հ. Տոնոյանի անվան փոխանցիկ Գավաթը: Ակումբի ղեկավարները, թիմի ֆուտբոլիստները եւ պաշտոնյաները (համաձայն խաղի արձանագրության) պարգևատրվում են ՀՖՖ-ի դիպլոմներով:

7. Փոխանցիկ Գավաթները պահվում են հաղթող ակումբներում, բայց հանդիսանում են ՀՖՖ-ի սեփականությունը: Հաղթող ակումբները պատասխանատու են փոխանցիկ Գավաթների համար եւ պարտավոր են այն ՀՖՖ-ին վերադարձնել տվյալ մրցման պարգևատրումից 10 օր առաջ գերազանց վիճակում:

Գավաթի կորստի կամ վնասման դեպքում ակումբները պարտավոր են վճարել Գավաթի արժեքի տասնապատիկը:

8. Գավաթի եւ Սուպերգավաթի խաղարկությունները սպասարկող անձնակազմի անդամները պարգևատրվում են ՀՖՖ-ի դիպլոմներով:

9. Բարձրագույն եւ Առաջին խմբերի Առաջնություններուն «Արդար խաղ» մրցույթի հաղթող թիմերը պարգևատրվում են ՀՖՖ-ի դիպլոմով:

10. Տարվա լավագույն ֆուտբոլիստը պարգևատրվում է 250 հազար դրամով: Մրցանակակիրը որոշվում է ՀՖՖ-ի Մամուլի քարտուղարության հարցմամբ:

11. Բարձրագույն խմբի տարվա լավագույն ռմբարկուն պարգևատրվում է «Ոսկե խաղակոշիկ» մրցանակով եւ 150 հազար դրամով:

12. Տարվա լավագույն մրցավար/ներ/ը պարգևատրվում է/են/ հուշանվերներով: Տարվա լավագույն մրցավար/ներ/ին որոշում է ՀՖՖ Մրցավարական կոմիտեն:

13. Բարձրագույն եւ Առաջին խմբերի մասնակիցների համար ՀՖՖ-ի Նախագահի կամ Գործադիր կոմիտեի որոշմամբ կարող են սահմանվել նաեւ այլ պարգևատրումներ:

Հոդված 18. Չկայացած եւ անավարտ խաղերը

1. Անավարտ կամ չկայացած են համարվում այն խաղերը, որոնք ընդհատվել կամ չեն կայացել հետևյալ պատճառներով.

- եղանակային պայմանների,
- արտակարգ իրավիճակների,
- լուսավորման համակարգի խափանման (անջատման), որը տեղի է ունեցել ոչ թե «դաշտի տեր» ակումբի մեղքով, այլ անհաղթահարելի արգելքների հետևանքով, եւ որը հնարավոր չի եղել վերականգնել 30 րոպեի ընթացքում:

- թիմ/եր/ի խաղադաշտը լքելու,
- երրորդ անձանց միջամտության,
- խաղի մասնակիցների անվայել վարքագծի,
- հասարակական կարգի խախտման, որն էապես ազդել է խաղի ընթացքի եւ արդյունքի վրա,

- այլ սուբյեկտիվ հանգամանքների:

2. Եթե խաղը չի կայացել կամ ընդհատվել է անկախ ակումբների կամ նրանց պատասխանատվության տակ գտնվող անձանց կամքից, ապա այն խաղացվում կամ շարունակվում է մեկ այլ օր՝ ընդհատման պահից, եւ դրա խաղացված մասի հաշիվը, կարգապահական տույժերը, փոխարինումները մնում են ուժի մեջ (պահպանվում են): Խաղի շարունակությանը մասնակցում են միայն այն ֆուտբոլիստները, ովքեր ընդգրկված են եղել խաղի արձանագրությունում: Այդ խաղի անցկացման /շարունակման/ ժամկետների վերաբերյալ որոշում կայացնելու իրավունքը պատկանում է ՀՖՖ-ին:

3. Մյուս դեպքերում խաղի արդյունքը չեղյալ է համարվում: Մեղավոր թիմին գրանցվում է տեխնիկական պարտություն 0-3 հաշվով, իսկ մրցակցին՝ հաղթանակ 3-0 հաշվով: Եթե մրցակցի առավելությունը հաշվի մեջ գերազանցում է 3 գնդակ, ապա խաղի հաշիվը մնում է ուժի մեջ: Եթե անվայել վարքագիծ է դրսևորվել երկու թիմերի ֆուտբոլիստների կողմից, ապա երկու թիմերին էլ գրանցվում է տեխնիկական պարտություն 0-3 հաշվով:

4. Գավաթի խաղարկությունում նմանատիպ դեպքերում մեղավոր թիմ/եր/ը հանվում է/են/ խաղարկությունից:

5. Չեղյալ համարված արդյունքների դեպքում գրանցված գույերը ռմբարկուների հաշվարկում չեն ներառվում, կարգապահական տույժերը մնում են ուժի մեջ:

Հոդված 19. Թիմերի չներկայանալը խաղին կամ Առաջնություններին մասնակցելուց հրաժարվելը

1. Անհարգելի պատճառով խաղին չներկայանալու, ինչպես նաեւ ժամանակին մարզադաշտն անպատրաստ տրամադրելու կամ չտրամադրելու դեպքում.

- Առաջնություններում խաղը համարվում է կայացած: Մեղավոր թիմին գրանցվում է տեխնիկական պարտություն:

- Գավաթի խաղարկությունում թիմը հանվում է խաղարկությունից, իսկ մրցակից թիմին շնորհվում է հաղթանակ երկու խաղերի արդյունքում:

2. Թիմը համարվում է խաղին «չներկայացած», եթե չի տեղեկացրել ուշացման պատճառների մասին եւ խաղասկզբին չի ներկայացել: Տեղեկացնելու դեպքում խաղասկիզբը կարող է հետաձգվել ոչ ավելի, քան 60 րոպե:

3. Երեք տեխնիկական պարտության դեպքում թիմը հանվում է Առաջնությունից:

4. Հատուկ դեպքերում ՀՖՖ ԳԿ-ի որոշմամբ թիմը հանվում է Առաջնությունից, եթե պարբերաբար խախտել է սույն Կանոնակարգը, չի կատարել ՀՖՖ-ի որոշումները եւ իր գործողություններով (կամ անգործությամբ) ոտնահարել է ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի եւ ՀՖՖ-ի հիմնարար սկզբունքները:

5. Եթե Առաջնությունից հանված թիմը մասնակցել է 50%-ից պակաս խաղերի, ապա խաղերի արդյունքները չեղյալ են համարվում: Հակառակ պարագայում անցկացված խաղերի արդյունքները մնում են ուժի մեջ, իսկ թիմերին, որոնց հետ չեն կայանալու խաղերը, շնորհվում է հաղթանակ՝ 3:0 հաշվով:

6. Բարձրագույն խմբի ակումբները (թիմերը), որոնք հանվել են (հրաժարվել են) Առաջնությունից, հաջորդ տարի կարող են մասնակցել Առաջին խմբի Առաջնությանը:

7. Առաջնությունից հանված (հրաժարված) թիմի մուտքավճարը չի վերադարձվում:

Հոդված 20. Բողոքարկումներն ու բողոքները

1. Բողոքարկումն ակումբի կողմից ՀՖՖ ներկայացված գրավոր դիմում է, որը նպատակ ունի չեղյալ համարել խաղի արդյունքը եւ/կամ վերախաղարկել այն:

2. Բողոքարկումն ընդունվում է գրանցվում է ՀՖՖ-ում, եթե ակումբի լիազորված անձը (նախագահ, թիմի պետ, գլխավոր մարզիչ) խաղից հետո պաշտոնապես դիմել է տեսուչին՝ լրացնելով խաղի արձանագրության համապատասխան բաժինը:

3. Բողոքարկման պատճառ կարող են հանդիսանալ՝

- չհայտավորված ֆուտբոլիստների մասնակցությունը խաղին,

- խաղի տեսողության հետ կապված անհամաձայնությունը,

- մրցավարի կողմից կանոնակարգային դրույթների խախտում/ները, որը (որոնք) ազդել են հանդիպման արդյունքի վրա:

4. Բողոքարկման ենթակա չեն մրցավարի կայացրած փաստացի որոշումները:

5. Բողոքը ակումբի կողմից ՀՖՖ ներկայացված գրավոր դիմում է, որը խաղը վերախաղարկելու նպատակ չունի եւ ուղղված է խաղին խոչընդոտող հանգամանքները վերացնելուն, մեղավոր անձանց պատժելուն եւ հետագայում նման խախտումներ թույլ չտալուն:

6. Բողոքները, կապված խաղադաշտի նշագծումների կամ դարպասների չափերի հետ, կարող են ներկայացվել միայն խաղի տեսուչին ոչ ուշ, քան խաղից 1,5 ժամ առաջ:

7. Բողոքարկումները եւ բողոքները ՀՖՖ ներկայացվում են ոչ ուշ, քան մինչեւ խաղին հաջորդող աշխատանքային օրվա վերջը:

8. Բողոքարկումները կամ բողոքները քննարկվում են ՀՖՖ համապատասխանաբար 100 000 եւ 60 000 դրամ մուծելուց (փոխանցելուց) հետո, մեկ շաբաթվա ընթացքում:

9. Բողոքարկման կամ բողոքի համար ՀՖՖ մուծված գումարը վերադարձվում է միայն բոլոր կետերով հիմնավորված ճանաչվելու դեպքում:

Հոդված 21. Խաղերի տեսագրումը

1. Բարձրագույն խմբի Առաջնության եւ Գավաթի խաղարկության մասնակից ակումբները պարտավոր են իրենց խաղերը տեսագրել առնվազն մեկ տեսախցիկով: Մրցակից ակումբների տեսախցիկները պետք է տեղադրված լինեն խաղադաշտի կենտրոնական գծի տարբեր կողմերում, միմյանցից առնվազն 20 մետր հեռավորության վրա: «Դաշտի տեր» ակումբը (թիմը) առաջինն է ընտրում նկարահանման դիրքը:

2. Մրցակից ակումբների կողմից օգտագործվող լրացուցիչ (մեկից ավելի) տեսախցիկ/ներ/ի դիրք/եր/ի ընտրությունը չի սահմանափակվում:

3. Առաջին խմբի խաղերի տեսագրումը պարտադիր է «դաշտի տեր» ակումբի (թիմի) համար:

4. Խաղը պետք է տեսագրվի ամբողջությամբ սկսած մրցավարների եւ թիմերի՝ խաղադաշտ մուտք գործելուց մինչեւ նրանց խաղադաշտից հեռանալը, այդ թվում խաղի ընթացքում տեղի ունեցող միջադեպերը: Խաղի օրվա եւ ժամի լուսագիրը տեսագրության ողջ ընթացքի վրա պարտադիր է:

5. Բարձրագույն խմբի խաղերի տեսագրությունները պետք է ներկայացվեն ՀՖՖ-ի մամուլի քարտուղարություն միայն թվային տարբերակով (DVD) ոչ ուշ, քան մինչեւ հաջորդ աշխատանքային օրվա ժամը 18:00:

6. Առաջին խմբի խաղերի տեսագրությունները պետք է ներկայացվեն ՀՖՖ-ի մամուլի քարտուղարություն ոչ ուշ, քան մինչեւ խաղին հաջորդող երկրորդ աշխատանքային օրվա ժամը 18:00:

Հոդված 22. Խաղերի հեռուստառադիոհեռարձակումը

1. Հանդիպումների հեռուստառադիոհեռարձակման իրավունքը պատկանում է ՀՖՖ-ին:

Հոդված 23. Մասնակցության մուտքավճարը

1. Մրցումների անցկացման ծախսերը մասնակիորեն փոխհատուցելու նպատակով ՀՀ-ի Գործադիր կոմիտեն սահմանում է մասնակցության տարեկան մուտքավճարներ:
2. Մրցումների մասնակցության տարեկան մուտքավճարներն են.
 - Բարձրագույն խմբում 3 500 000 դրամ,
 - Առաջին խմբում 1 500 000 դրամ:
3. Գավաթի խաղարկությանը թիմերը մասնակցում են առանց մուտքավճարի:
4. Մուտքավճարների մուծման վերջնաժամկետներն են.
 - մուտքավճարի 20%-ը - մասնակցության հավաստագրի ներկայացման ժամկետին
 - մուտքավճարի 80%-ը - հայտավորման փաստաթղթերի ներկայացման ժամկետին
5. Մուծումներն ուշացնելու դեպքում սահմանված է տուգանք՝ ուշացված գումարի 20%-ի չափով:

Գլուխ IV. ԽԱՂԵՐԻ ՄՊԱՍԱՐԿՈՒՄԸ

Հոդված 24. Սպասարկման իրականացումը

1. Խաղերի սպասարկումն իրականացնում են Մրցավարական կոմիտեի կողմից երաշխավորված Ե ՀՀ-ի նախագահի կողմից հաստատված մրցավարներն ու տեսուչները:
2. Խաղերի սպասարկումն իրականացվում է համաձայն «Ֆուտբոլ խաղի կանոնների», ՖԻՖԱ-ի միջազգային խորհրդի կողմից ընդունված փոփոխությունների և ՈՒԵՖԱ, ՖԻՖԱ և ՀՀ Ֆ պաշտոնական խաղերի անցկացումը կարգավորող այլ նորմատիվ փաստաթղթերի:
3. Մրցավարների և տեսուչների իրավունքները Ե պարտականությունները սահմանվում են «Ֆուտբոլ խաղի կանոնների», սույն կանոնակարգի դրույթների Ե մրցավարությունն ու տեսչությունը կանոնակարգող ՀՀ-ի այլ փաստաթղթերի համաձայն:

Հոդված 25. Սպասարկող անձնակազմի նշանակումը

1. Սպասարկող անձնակազմի անդամները ներկայացվում են ՀՀ Նախագահի հաստատմանը Մրցավարական բաժնի կողմից:
2. Առանձին դեպքում խաղերի սպասարկող անձնակազմը, ՀՀ Նախագահի որոշմամբ, կարող է հրավիրվել այլ երկրից:
3. Ակումբների կամ այլ կազմակերպությունների պահանջով (խնդրանքով) սպասարկող անձնակազմի անդամների նշանակում կամ փոխարինում չի կատարվում:
4. Սպասարկող անձնակազմի անդամները պարտավոր են հաստատել իրենց մասնակցությունը ոչ ուշ, քան խաղից 3 օր առաջ, բացառությամբ որոշ չնախատեսված դեպքերի:
5. Անհրաժեշտության դեպքում տեսուչը ներկայացնում է՝ թե սպասարկող անձնակազմից ով կարող է փոխարինել մրցավարին:

Հոդված 26. Սպասարկող անձնակազմի անդամների գործառույթները

1. Սպասարկող անձնակազմի բոլոր անդամներին արգելվում է խաղի մեկնել (վերադառնալ) տվյալ խաղի մասնակից թիմերից որեւէ մեկի հետ, Ե/կամ իջեւանել նույն հյուրանոցում (մարզաբազայում):
2. Մրցավարը Ե/կամ 4-րդ պաշտոնյան պատասխանատու են արձանագրություններում ընդգրկված ֆուտբոլիստների անձերի իսկության համար:
3. Մինչխաղային խորհրդակցությունից առաջ մրցավարը Ե տեսուչը ստուգում են խաղադաշտի որակը: Դաշտի որակի հետ կապված՝ խաղի անցկացման վերջնական որոշումը կայացնում է մրցավարը:
4. Խաղասկզբից 45 րոպե առաջ 4-րդ պաշտոնյան թիմերի հանդերձարաններում ստուգում է խաղացողների հանդերձանքը: Խաղադաշտ դուրս գալուց անմիջապես առաջ թիմերի հանդերձանքը ստուգում են մրցավարի օգնականները:
5. Խաղի տեսուչի բացակայության դեպքում մրցավարը պարտավոր է կատարել նրա պարտականությունները:
6. Մրցավարը խաղավարտից հետո մեկ ժամվա ընթացքում ձեւակերպում է խաղի արձանագրությունը Ե ֆաքսով ուղարկում ՀՀ:
7. Խաղի արձանագրությունը, ինչպես նաև տեսուչի զեկուցագիրը Ե «Արդար խաղի» գնահատման արձանագրությունը ներկայացվում են ՀՀ ոչ ուշ, քան խաղին հաջորդող աշխատանքային օրվա ժամը 12:00:
8. Խաղից առաջ, խաղի ժամանակ, ընդմիջմանը, խաղից հետո տեղի ունեցած արտակարգ դեպքերի մասին սպասարկող անձնակազմի անդամները ՀՀ ներկայացնում են զեկուցագրեր ոչ ուշ, քան խաղին հաջորդող աշխատանքային օրը:

9. Տեսուչը խաղի կազմակերպման ընդհանուր պատասխանատուն է: Որեւէ թիմի՝ խաղից ուշանալու դեպքում, խաղասկզբի եւ խաղի անցկացման որոշումը կայացնում է տեսուչը:

10. Սպասարկող անձնակազմը պարտավոր է ձեռնարկել բոլոր միջոցները՝ խաղն անցկացնելու համար:

11. Բողոքարկման առկայության դեպքում տեսուչն այդ մասին անմիջապես տեղեկացնում է մրցակից թիմին եւ ՀՖՖ-ին:

Հոդված 27. Մրցավարների եւ տեսուչների վարձատրումը

1. Մրցավարների եւ տեսուչների աշխատանքի եւ գործուղման վարձատրությունը կատարում է ՀՖՖ-ն:

2. Չկայացած եւ անավարտ խաղերի, ինչպես նաեւ սույն Կանոնակարգի հոդված 19 կետ 1-ում նշված դեպքերում մրցավարների եւ տեսուչի աշխատանքի եւ գործուղման վարձատրությունը կատարվում է ընդհանուր հիմունքներով:

3. Բացառիկ դեպքերում, երբ խաղը չի սկսվել սույն Կանոնակարգի հոդված 18 կետ 2-ում նշված պատճառներով, ապա վճարվում են միայն գործուղման ծախսերը:

Գլուխ V. ԻՐԱՎԱՀԱՐԱՐԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 28. Պայմանագրերի գրանցումը

1. Ֆուտբոլային սուբյեկտների միջեւ պայմանագրերը, պայմանագրերի փոփոխումը եւ լուծումը, ֆուտբոլիստների ակումբից ակումբ տեղափոխումը կարգավորում է «Ֆուտբոլիստների կարգավիճակի եւ տեղափոխման մասին» Կանոնակարգով:

Հոդված 29. Վեճերի քննարկումը

1. Ֆուտբոլային սուբյեկտների միջեւ ծագած վեճերը, համաձայն ՀՖՖ կանոնադրության, քննարկվում եւ վերջնական լուծում են ստանում ՀՖՖ-ում՝ ելնելով ՀՖՖ-ի, ՈՒԵՖԱ-ի եւ ՖԻՖԱ-ի հիմնարար փաստաթղթերի դրույթներից:

Պայմանագրերի հետ կապված վեճերը քննարկվում են միայն ՀՖՖ-ում գրանցում ստացած պայմանագրերի առկայության դեպքում:

2. Մրցումների անցկացման հետ կապված այն իրավահարաբերությունները, որոնք չեն կարգավորվում սույն Կանոնակարգով, ենթակա են կարգավորման ՀՖՖ-ի, ՈՒԵՖԱ-ի, ՖԻՖԱ-ի այլ նորմատիվ փաստաթղթերով, ՀՀ գործող օրենսդրությամբ:

Հոդված 30. Ակումբի (թիմի) անվանափոխությունը

1. Ակումբի անվանափոխությունը կատարվում է ՀՀ օրենսդրության համաձայն: Ակումբը պարտավոր է մեկամսյա ժամկետում գրանցել անվանափոխությունը ՀՖՖ-ում՝ վճարելով 30.000 դրամ:

2. Թիմի անվանափոխությունը կատարվում է ակումբի կողմից ՀՖՖ ներկայացված գրավոր դիմումի համաձայն՝ 30.000 դրամ վճարելուց հետո: Թիմի անվանափոխությունը հաստատում է ՀՖՖ-ի Գործադիր կոմիտեն:

Հոդված 31. Իրավահաջորդությունը

1. Իրավահաջորդությունը ակումբների վերակազմակերպման դեպքում կատարվում է ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

2. Վերակազմակերպման արդյունքում առաջացած ակումբները պարտավոր են ՀՖՖ ներկայացնել իրենց իրավահաջորդությունը հաստատող փաստաթղթեր, որից հետո միայն ակումբներն իրավունք կստանան մասնակցել ՀՖՖ-ի հովանու ներքո անցկացվող պրոֆեսիոնալ մրցումներին:

Գլուխ VII. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 32. Թիմերի մասնակցությունը Եվրագավաթներին

1. Հայաստանի Չենպիոն թիմն իրավունք է ստանում մասնակցելու ՌԲՖԱ-ի 2010/11թթ Չենպիոնների Լիգայի (ՉԼ) խաղարկությանը, ինչպես նաև 2010թ ԱՊՀ Գավաթի մրցաշարին: Վերջինիս՝ մրցաշարին մասնակցելուց հրաժարվելու դեպքում մասնակցելու իրավունքը փոխանցվում է հաջորդ տեղը գրաված թիմին:

2. Հայաստանի Գավաթակիրը իրավունք է ստանում մասնակցելու ՌԲՖԱ-ի 2009/10թթ Եվրոպայի Լիգայի խաղարկությանը:

3. Բարձրագույն խմբի Առաջնության արժաթե եւ բրոնզե մեդալակիրները իրավունք են ստանում մասնակցելու ՌԲՖԱ-ի 2010/11թթ Եվրոպայի Լիգայի խաղարկությանը:

4. Մեկ թիմի կողմից եվրագավաթներին մասնակցելու երկու իրավունք վաստակելու դեպքում՝

4.1 Հայաստանի Գավաթը նախորդ տարվա Չենպիոնի նվաճելու դեպքում ՌԲՖԱ-ի 2009/10թթ Եվրոպայի Լիգայի խաղարկությունում հանդես գալու իրավունքը փոխանցվում է Գավաթի եզրափակչի մասնակցին: Եթե Գավաթի եզրափակչի մասնակիցն այս դեպքում նախորդ տարվա արժաթե կամ բրոնզե մեդալակիրն է, ապա ՌԲՖԱ-ի 2009/10թթ Եվրոպայի Լիգայի խաղարկությանը մասնակցելու իրավունքը համապատասխանաբար փոխանցվում է նախորդ տարվա Առաջնությունում հաջորդ տեղը գրաված թիմին:

4.2 Հայաստանի Գավաթը՝ նախորդ տարվա արժաթե կամ բրոնզե մեդալակիրի նվաճելու դեպքում ՌԲՖԱ-ի 2009/10թթ Եվրոպայի Լիգայի խաղարկությանը մասնակցելու իրավունքը համապատասխանաբար փոխանցվում է նախորդ տարվա Առաջնությունում հաջորդ տեղը գրաված թիմին:

5. Բարձրագույն խմբի Առաջնության «Արդար խաղի» մրցանակակիրը կարող է ստանալ ՌԲՖԱ-ի 2009/10թթ Եվրոպայի Լիգայի մրցաշարին մասնակցելու իրավունք, եթե ՀՀՖ-ն ՌԲՖԱ-ի «Արդար խաղի» ընդամուր ցուցանիշներով նվաճել է նման իրավունք: Եթե նման իրավունք ստացած թիմը արդեն իսկ որակավորվել է ՌԲՖԱ-ի ակումբային մրցաշարերին մասնակցելու համար, ապա իրավունքը համապատասխանաբար փոխանցվում է ՀՀՖ «Արդար խաղի» դասակարգմամբ հաջորդ տեղը գրաված թիմին:

Յոթված 33. «Արդար խաղի» գնահատումը

1. «Արդար խաղի» մրցույթի նպատակն է՝ «Արդար խաղի» սկզբունքներն արմատավորել հայկական ֆուտբոլում եւ ֆուտբոլ խաղը մասնակիցների եւ հանդիսատեսի համար վերածել իրական տոնի, ներկայացման, զվարճանքի:

2. «Արդար խաղի» գնահատումը կատարվում է առավել դրական, քան բացասական տեսակետների հիման վրա.

- խաղի գրավչությունը,
- հանդիսականների պահվածքը,
- մրցակցի նկատմամբ հարգալից վերաբերմունքը,
- մրցավարների նկատմամբ հարգալից վերաբերմունքը,
- կարմիր եւ դեղին քարտերի քանակը,
- թիմի պաշտոնյաների պահվածքը:

3. «Արդար խաղը» գնահատվում է տեսուչի կողմից՝ խորհրդակցելով մրցավարի հետ:

4. «Արդար խաղի» մրցույթի մասնակից թիմերի դասակարգումը կատարվում է տարեկան մեկ անգամ՝ խաղաշրջանի ընթացքում վաստակած գնահատականների արդյունքով եւ հաստատվում է ՀՀՖ-ի Գործադիր կոմիտեի կողմից: Իսկ միջանկյալ արդյունքները հրապարակվում են մանուկում՝ ամեն շրջանի ավարտին:

Յոթված 34. Այլ հարցեր

1. Ֆուտբոլիստների կարգավիճակը եւ տեղափոխությունները կարգավորվում են ՀՀՖ-ի «Ֆուտբոլիստների կարգավիճակի եւ տեղափոխման մասին» կանոնակարգով:

2. Սույն Կանոնակարգի դրույթ/ներ/ի խախտումը (չկատարումը) առաջացնում է պատժամիջոցներ եւ/կամ տուգանքներ՝ համաձայն ՀՀՖ-ի «Կարգապահական կանոնակարգի»:

3. Մրցավարությունն ու տեսչությունը կոպիտ սխալներով անցկացնելու դեպքում սպասարկող անձնակազմի սխալ/ներ/ թույլ տված անդամների նկատմամբ կիրառվում են կարգապահական պատժամիջոցներ՝ համաձայն ՀՀՖ-ի մրցավարությունն ու տեսչությունը կանոնակարգող նորմատիվ փաստաթղթերի:

4. Կանոնակարգի ցանկացած թարգմանության ընթացքում առաջացած երկիմաստությունների դեպքում առաջնային է համարվում Կանոնակարգի հայերեն տարբերակը:

5. Սույն Կանոնակարգը ուժի մեջ է մտնում ՀՖՖ-ի Գործադիր կոմիտեի կողմից հաստատման պահից եւ գործում է մինչեւ նոր Կանոնակարգի ընդունելը:

Հավելված 1

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈՒԼԻ 2009թ. ԳԱՎԱԹԻ ԽԱՂԱՐԿՈՒԹՅԱՆ

1. Հայաստանի ֆուտբոլի 2009թ. Գավաթի խաղարկությունն անցկացվում է օլիմպիական մրցակարգով:
2. Գավաթի խաղարկությանը մասնակցում են միայն Բարձրագույն խմբի թիմերը:
3. Գավաթի խաղարկությունը սկսվում է 1/4 եզրափակչից:
4. 1/4, 1/2 եզրափակիչ հանդիպումները (երկուական խաղ) անցկացվում են սեփական եւ մրցակցի դաշտերում:
5. Հաղթող թիմը որոշվում է երկու խաղերի արդյունքներով: Հավասար ցուցանիշների դեպքում առավելությունը տրվում է հյուրընկալվելիս ավելի շատ գոլ խփած թիմին, իսկ դրա հավասարության դեպքում երկրորդ խաղի ավարտին նշանակվում է լրացուցիչ 30 րոպե խաղաժամանակ՝ 2 խաղակեսով (15+15 րոպե՝ առանց ընդմիջման): Լրացուցիչ ժամանակում հավասար արդյունքի դեպքում եւս առավելությունը տրվում է հյուրընկալվելիս ավելի շատ գոլ խփած թիմին, իսկ դրա հավասարության դեպքում նշանակվում է 11 մետրանոց հարվածաշար՝ ըստ «Ֆուտբոլ խաղի կանոնների»:
6. Եզրափակիչ խաղը անցկացվում է մեկ հանդիպումով 2009թ մայիսի 9-ին: Արդյունքի հավասարության դեպքում նշանակվում է լրացուցիչ 30 րոպե խաղաժամանակ՝ 2 խաղակեսով (15+15 րոպե՝ առանց ընդմիջման): Հաշվի հավասարության դեպքում նշանակվում է 11 մետրանոց հարվածաշար:
7. 2008թ. Բարձրագույն խմբի առաջնության առաջին 4 թիմերը ընդգրկվում են խաղացանկի 1/4 եզրափակչի 4 զույգերի կազմում՝ մեկական թիմ ամեն զույգի մեջ, ընդ որում չենպիտունը՝ առաջին զույգում, 2-րդ տեղը զբաղեցրած թիմը՝ 2-րդ զույգում, 3-րդը՝ երրորդում, 4-րդը՝ չորրորդում:
8. Նշված թիմերի մրցակիցները որոշվում են վիճակահանությամբ:
9. Գավաթի խաղարկության ցանկը լրացնելուց հետո յուրաքանչյուր մրցափուլի համար /բացի եզրափակչից/ վիճակահանությամբ որոշվում է մրցափուլի առաջին խաղում «դաշտի տեր» թիմը:
10. Վիճակահանությունը կատարվում է ոչ ուշ, քան Գավաթի խաղարկության մեկնարկից 10 օր առաջ:
11. Վիճակահանությանը մասնակցում են յուրաքանչյուր ակումբից (թիմից) մեկ ներկայացուցիչ: Թիմերի ներկայացուցիչների բացակայության դեպքում վիճակահանությունը կատարվում է առանց նրանց: